

’ի հոգեւոր կամս մեր՝ դարձաք յիմաստախոհ յուսոյ սոցա՝ ամօթով»⁶¹։- Թուի ինձ թէ սակաւայոյս քան զՍուրբն էր խորագէտն Լեւոն՝ ’ի յաջողութենէ միաբանութեանն ընդ Յոյնս, եւ ոչ այնքան փափագող՝ որքան ընդ Լատինացիսն, ընդ որոց՝ շահ մեծ օգտի էր նմա՝ հաւասարել, եւ բառնալ զխէթ եւ զկրճիմն այլափառութեան կարծեաց՝ միանգամայն եւ որդեգրել ընդ անձինն եւ գնորապսակ թագաւորութիւն ազգին՝ ընդհանրական Քահանայապետին Հռովմայ, զորոյ տեսանէր յայնժամ կրկնագոր հեղինակութիւն ’ի վերայ ամենայն միակրօնից քրիստոնէից. եւ թէ ո՛րպէս օրհնառաք եւ յորդորակ կոնդակօքն եւ քարոզչօք՝ շարժեր զազգս եւ զժողովուրդս եւ զարեւմուտս համօրէն, յօգնախուռն բանակօք խաղալ կոխել զաշխարհս այլալեզու ազանց, եւ ընդ երկայնաձիգ ճանապարհս հերձանելով զկոհակս լերանց եւ զծովուց՝ դիմել յարեւելս, զինեալք խաչի եւ սուսերաւ, յազատութիւն Քրիստոսի տնօրինական եւ սուրբ տեղեացն:

Գ. Միաբանութիւն ընդ Եկեղեցւոյն Հռովմայ.

Կարելոր է մեզ աստանօր նկատել զայս մեծ խորհուրդ եւ զործ Լեւոնի, զմիաբանութեանն ընդ արեւմտեան եկեղեցւոյ, զի եւ անանջատ է ’ի ինդրոյ թագախնդրութեան նորին։- Որ նոր ինչ եւ առաջին նուագ էր այս՝ ծանօթութեան եւ ընտելութեան Հայոցս ընդ Լատինաց, այլ անդստին ’ի դարէ հետէ, եւ յառաջ իսկ քան զյառնել Խաչակրաց, սկզբնաւորեալ՝ շնորհօք նախահաւու Պապիաիկ կաթողիկոսաց, մեծի Վկայասիրին ասեմ Գրիգորի. որում՝ յուղեւորութիւնս իւր յԵրուսաղէմ եւ ’ի վանորայս Եգիպտոսի՝ հանդիպեալ ուխտաւորաց արեւմտեայց՝ սքանչանային ընդ իմաստութիւնն եւ ընդ սրբական վարսն, եւ ըղձային հաղորդակից լինել եկեղեցւոյն Հայոց, համբաւելոյն հարիւրաւոր եպիսկոպոսօք ընդ միով կաթողիկոսական զլխով, որում պապական իմն պատիւ ընծայիւր յազգէն։ Թէ

⁶¹ Արժան համարիմ եւ զասացեալսն զՆերսիսէ բանս կարգել. որ թէ եւ յազգայնոյ աւանդեալ՝ այլ հաւասար ճշմարտութեան. յաւարտ վիճաբանութեանցն՝ ասէ՝ «Եկն ոմն իմաստասէր կրօնաւոր առ Ս. Ներսէս, եւ ասէ, թէ Առանձինն առեր գովութիւն ’ի մետրապօլտացն եւ ’ի կղերիկոսացն եւ յիշխանացն եւ առ հասարակ յամենայն ժողովրդոցն. զի որ ’ի մարտ ելանէ՝ թէ եւ ինքն գիտէ զիւր ըռըմբին թափ տալն, բայց հայեցողն առաւել եւս տեսանէ. այսպէս եւ մեք զքո յաղթութիւնդ՝ հակառակամարտին։ Նոյնպէս եւ իշխանքն զային եւ ասէին զարմացմամբ, թէ Մին մարդ զայսքան մեծ ժողովս յոտին կացոյց։ Եւ ’ի հարցանելն եւ ’ի Սրբոյն Ներսէսի պատասխանելն՝ ամենեքեան ափ ’ի բերան եղեն»: